Սիփան Շիրազ

Երևանյան օրեր: Շողակաթ: Շրարում ուղարկում եմ քեզ

Երևանյան այս օրերը վերջ կունենան,
Եվ կմնա թատերաբեմ լքյալ հուշի:
Հրաժեշտի սեղանապետ կնախընտրենք –
Մեր կարոտը կամ հարբեցող մի ապուշի:

Եվ ուրիշի համար լակած թախիծը մեր
Կթավալվի փողոցներում, կծավալվի,
Եվ կհալվի – սենտիմենտալ կյանքին ընտել,
Եվ հետքերը մեր՝ կիրակին դանդաղ կավլի:

Ցախավելից պոկված շիվեր – տրտունջներ սուտ՝
Քամուն տվինք: ՄԵՐ ՕՐԵՐԸ տարավ քամին;
Հարբեցողի համբավն էր մեզ հավատամուտ.
Եվ՝ թողություն՝ միայն հուշը ավարտ ժամի:

Հիմի, գիտե՛ս, իմ նախընտրյալ, սուտ են, քամի՛,
Հավատապատ պուրակները անկողնակաթ.
Բաժան-բաժան ու տկլոր ենք ու մերկ՝ հիմի՛,
Ցախավելից պոկված հուշի նման վիատ:

Իսկ դո՛ւ, ԽԵ՛ՆԹՍ, դեռ հիշում ես – ԿՅԱ՛ՆՔ, ԿԻՐԱԿԻ՛,
Երևանյան թախիծ, սիրո «հանգած լապտեր»

Որպես աղոթք տանուլ տված նպատակի, –
ԷԽ, ԱՍՈՒՄ ես, ԷԽ ՍԻՓԱՆՕ, լակած ախպեր:

Երազում ենք նորից, դարձյալ, երկա՛ր ու ձիգ,
Մինչ մեռնում է մատռվակն այն գինեհուշի.
ՉՀԱՍԿԱՑԱՆՔ. մեր կյանքը ում վստահեցինք.
Բարի Աստծո՞ւն, թե անաստված մի ապուշի: